

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՍԻԼԸ

4.

ԿՈՌԻՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ (1860—1863)

Առաջին եւ նախապատիւ ամսագիր, որ եղել է Կովկասում 60ա-կան թուականներին դա և Կոռունկ ան է Այս ամսագրի խմբագիր Մար-կոս Ազարեցեանը (ծն. Զմիւռնիա 1830 թ.) աւարտելով Փարիզի Մու-րատեան վարժարանի դասընթացքը, վերագարձաւ Զմիւռնիա, որտեղ նա յայտնի եղաւ իրեւ դպրոցական և հասարակական գործիչ եւ շու-տով տեղափոխուեցաւ Կ. Պոլիս եւ 1859 թ. նորընտիր Մատթէոս կաթո-ղիկոսի հետ քարտուղարի պաշտօնով էջմիածին եկաւ Այգտեղից նը-րան Երաւերիցին Տփիսիա, Ներս. Դպրո ուսուցչական պաշտօնով Այգտեղ նա ծանօթացաւ ժամանակակից երիտասարդութեան հետ եւ յայտնի գործիչ Համբարձում էնֆիաճեանցի հետ համաձայնութիւն կայացնելով 1860 թ. Թիֆիզում սկսեց Երաւարակից և Կոռոնկ ուր... և ես Հայոց և Կոռունկն ա եմ. հայի կենդանի պատկերն եմ. ես դրախտի հինորեաց թուանն եմ յատ շար ու բարի տեսած. շատ բարեքաստիկ ու շարարա-տիկ տեսարանների եւ դեպքերի վկայ ու հանդիսացիր... և ես « Ֆը-ռունկ ան մինչեւ իր վախճանը եղաւ յաւ հայ՝ հայկական ոցի ունեցող ամսագիր Վերնադրից յետոյ տպուած էր՝ «Ամսագիր բարոյական, բանա-սիրական, նկարագրական եւ վիճակադրական նուրբեալ նախնի եւ արդի Հայաստանիաց » իսկ 1863 թուին և Հանդէս ամսօրեայ տղային եւ բարոյական լուսաւորաթեան Հայաստանիաց ։ որից յետոյ գրուած էր՝ « Կոռոնկ, ուստի՝ կուգաս, ձայնիկդ ՚ի հոդիս, Կոռոնկ, մեր աշ-խարհին խապրիկ մի չունի՞ս ու Հրատարակւում էր ամսի սկզբին, 5 թերթից, (80 էջ) և Բանասէրի ո դիրքով թուղթը միջակ, տպուած էր ու հայ տպարանի Գարբիելի Մելքոնեանց եւ Համբարձում էնֆիաճեանց»։

Պ. Յարոյ իր « Հայոց Մամուլը Ռուսաստանում ո գրուածքի մէջ յիխաւ է մննադրատեր զ Կոռունկ ոք, չհաւանելով նրա ազգային ուղղու-թիւնը Բայց եւ այնպէս չէ ժխտում, որ նա և կարող էր ունենալ իր պոյտթեան իրաւունքը ու նատ քիչ է աւդպիսի վերաբերմունք զոյց տալը, ոլիսի աշքի առաջ ունենալ 60ական թուականները, երբ ազգա-ցին սպեւորութիւնը թէ՝ Ռուսահայոց եւ թէ Տաճկահայոց մէջ անացին եր « Կոռունկ »ի ո՞ք համարն էլ վերցնենք պարզ կը տեսնենք թէ որքա՞ն խնամքով էր խմբագրուած, այդ ամսագիրը (ընթերցողը թող չը մոռանայ-

որ այդ կատարւում էր 1860-63 թուականներին ես պ. Պ. Լեւոնեանցի հետ կասեմ և Կոռւնկ ամսագիրը նոր ժամանակակից նայ հանդէսների մէջ. առաջնակարգ աեղը կարող է բանել իւր բարձր դիրքով, աւելի իւս առաջ ու ընսիր նիւթերով ու Այժմ էլ իմէ, թեքթերու լինես « Կոռւնկի » տետրակաները, կարող ես միսիթարուել ի՞նչ գեղեցիկ նիւթեր առես որ շիան այնաեղ. վիրապասանական համեն գրուածքներ, նամականի... « Կոռւնկի » « Խապրիկները » զարդարում են պ. Աղաբէկիանի հանդիսի էջերը... (Հայոց Պարք. Մամուլը, էջ 209)».

« Կոռւնկի » մէջ կար ազգային պատմութիւն, գիտական յօդուներ, վիպ. ժամանակակից նայ կեսնքը (ժամանակն Տաճկանայց), զըրականութեան պատմութիւն, խորհրդածութիւններ զպրոցական հարցերի վերաբերեալ եւ այլն եւ այլն Օրինակ 1861-ին տուել է 'ի միջի այլոց եւ հնտեւեալ յօդուածներ.

Դարեգին (ողբերգ). Կիզօյի Պատմութիւն Քաղաքակրթութեան Իշխանականածն Արագնա (Ժատերգ), Քանի մի խօսք ազգի ներկայ դրութիւնն զրայ, Օվսաննա (Ա. Արովեանի), Բանաստեղծութեան վերայ, Դաստիարակութեան Վիգրէծ, Եղային յառաջդիմութեան նշաններ, Անդրիսական նամականի, Հասարակաց բժշկականութիւն, Ներս. Հոգ. դպրոցը Թիֆլիզում, Կոմս Կավուրի Մատամունք մեր հայոց ազգային եւ բարոյական զտրդակման վրայ, Ճաշակ պարսկի բանաստեղծութեան, Ազգային Սահմանադրութիւնը (Կ. Պոլիս), Թօմաս Բօցարիա, Վարկի մասին, Մէկ քանի խօսք Արովեանի վերայ, 1861 ամի Փետրուարի 19-րդ օրը Ռուսաց համար, Ազգային հարսանիք, Նամակներ՝ Մոսկուայից, Ազույիսից, Թիֆլիսից, Արադաճունից եւ Արարատեան գաշտից, Երկրագունուն եւ աստղայից Երկինքի Հայոց աշխարհի կոնկան խապրիկները, Նորատիպ մատեանք, Տիեզերաբանեղծութիւն, Ռուսատալէլի ընծու մորթի հազած մարզը, (վրաց գրականութիւնից), Մեր այր (Գամառ Թաթիպայի), Մահաղուցակ Գէորգ Արուցեանի եւ այլն եւ այլն

Այս բովանդակութիւնից յետոյ ես չեմ հասկանում թէ էլ ի՞նչ ահա սակ հարուստ բովանդակութիւն պիտի ունենար ամսագիրը այնպիսի ժամանակներում.

Զորս տարուայ ընթացքում ամսագիրը հրատարակուեցաւ կանոնաւոր, տուեց 48 համար Վերջին տարին, այն է 1863-ին « Կոռւնկն ու ունէր 266 բաժանորդ Տարէն արժէր 8 իուրլի Ամբաղջութիւնը խոսատանում էր, զեռ եւս 1861-ին, որ եթէ ամսագրի բաժանորդների թիւն անցնի 400-ից, ամեն մի հարիւրեակի վրայ մի ուսւըլ Կը պակսի. Օրինակ 700 եղած դէպքում բաժնեգիրնը Յ. Բ. էր լինելու Վերջին համարը լոյս տեսաւ 1863 թ. գեկտեմբերին, որի մէջ 1864 թ. համար բաժան նորդագրութիւն էր բացուած, որի մէջ առած էր, իր նաև և Հայրենիաց

մաստորական երինքումը թշոշելու մտադիր է նոյն եւ մի քնթացգով, ինչպէս յառաջ, բայց հարկաւ աւելի ջանք եւ փոյթ անելով, որ իր սկզբունքներն զգացմունքներն ու բարբառը աւելի ընդարձակ, աւելի հասարակաց եւ աւելի ժողովրդային անէ ։

« Կոռունկին » աշխատակցում էին Մ. Մամուրեան, Գ. Պոչեան, Գ. Շերմագոնեան, Ա. Երիցեան, Սարգսի Գիշագեան, Գ. Մուրագեան, Սամուել Գիւլգագեան, Բ. Սթամանեան, և. Բասատամեան, Յ. Փ., Միսաք Արամեանց, Յակոբ Կարենեանց, Հ. Էնֆիամեանց, Գամառ-Քամբապաս, Ս. Արծրունի, Մկրտիչ գ. Արիմեան, Գ. Տէր Աղէքոսնդրեանց, Սա. Պարտանեանց, Եզիչէ Մհեմատունեանց, Նատալիա Միրզոյեանց, Արքանամ Փափանեանց, Արէլ արքեպ. Միսիթարեանց, Մ. Մնասիրեան, Գ. Մրուանձաւեանց, բժ. Դաւիթ Ռոստոմեանց եւ. այլք։

« Կոռունկից » արտատպուել է Պոչեանցի « Այս եւ Վարդիքեր » և. Կ. Վ. Շանհազարեանի « Մրազից պատմութիւն Հայոստանի եւ նորա այժդ մեան վիճակին վրայ »)։

Զը նայած այն հանգամանքին, « որ 1864 թ. համար արդէն յայտարարուած էր, որ ամսագիրը պիտի շարունակուի, յանկարծ նա կանգ տուաւ և մ կարծիքով բաժանորդների քչութիւնն էր պատճառ եւ ոչ թէ խմբագիր Մ. Աղաքէղեանի Կ. Պոլիս գնաւը, որովհետեւ նա Թիֆլիսից հեռացաւ 1865-ին»։

Սո յսեւ ևմ հին մարդկանցից մէկից, որ Մ. Աղաքէղեանը մէկ մէկ հրատարակչին համազում էր վարձարելու աշխատակիցներին զբամով. եւ գուցէ այդ էր պատճառը, որ ամսագրի շապիկի վրայ տպւում էր՝ ՚ի միջի այլոց հետեւեալը. « Ո՞վ որ կցանկայ յօդուած հրատարակել տալ հանդիսիս մէջ, թէ պայմանվ թէ պուած պայմանի. (Ընդզծութիւն է), պէտք է ուղղակի խմբագրի հետ խօսակից լինի այս մասին... » *)։

Ե.

ՀԱՅԿԱԿՈՆ. ԱՇԽԱԲԱԴ (1865—1879)

« Կոռունկ ո-ի ժառանգ կամ աւելի լաւ ասած անհարազապ որդին և այս ամսագիրը որ իր անվերջ հանադրութամբ նեամբ ստիպեր է լրա-

*) Գ. Զ., Հեռնեանը աշխատակիցների ցանկում սխալ մամբ յիշել է և կարապետ զահնազարեանին: Նորա այս գործը ֆրանսերէնից թարգմանել է կործեմ ինքը՝ Մարկոս Աշաքէղեանը:

**) Մ. Աշաքէղեանը դաշտով Կ. Պոլիս, այնուն էլ « Նիկն Աւարութիւն և անունով ամսագրի սկսեց հրատարակել 1866-67 թ. սակայն յաջողութիւն չունեցաւ. և գոդարձու Մրտագիրը նայն էր ինչ որ « կոռունկի », սակայն դիրքն ու ծառալը աւելի փոքր ներկայութեան մէ Աղաքէղեանի պարում է Կ. Պոլիսում: 1. 1

զրութեան պ. պատմիչ Պ. Հետօնեանին զուր զարմացականներ պնդրաւ Այս ամսադիրը հրատարակում է Թիֆլիս, Եռուշի, Գանձ սկ, Գաղու և Երեւան քաղաքներում, Մինչդեռ չզիտեմ ինչու յայտնի հնախառ հանդրատ ցեալ Ա. Երիցեանը Երեւանի տեղ Եվլիբածին է դրեւ և այ էնթանան ցին զարմացրել:

Ա կունկ ս-ի հմամին խօսելիս ես Եկատերի, որ Նիւթականն էր պատճառը այդ ամսագրի գաղարմանը Այս նո զիրցնում Կմմ և Մեղուի և մէջ եղած (1864 թ. № 31 օգոստ 8-ին, էջ 244-245) Նիւթական թիվունից 1863 թ. սկզբին Հ. Էնֆիանեանցը պորժից ետ քաշուեցաւ, տակայն վեռ բազանց և հրատարակից և կոչումը եւ Մ. Աղաբեգեանը մնաց միայնակ որպէս Կմբագիր հրատարակից:

Դադարումից յետոյ հրատարակութիւնն ձեռնարաւ իւ Կորս. Մասկուայի նամալուարանի ձնունասուն Ստեփանէն (յետոյ Ասորէն Սպ. Ստեփանէ) եւ 1865 թ. մկնեց հրատարակնել ամսագրիրը և կունկ Հայկական աշխարհի և անունով Յայտարարութեան մէջ նա ասում է. « Ո Յրադրիս խմբագրոց քաջ գիտէ որ օրագիր անվանված չէ այն ամենայն զրութիւն, որ միայն տպվում է, ունի առօրագրողների նշանակիոն թիւը, հրատարակում է յայտնի ժամանակում, մի խօսքով այն ամենայն զրութիւն, որ խիստ պահպանում է ամենայն արտաքին ձեւերը, բայց օրագիր է այն, որ վերոյիշված արտաքին պայմաննենի հետ ունի եւ ներքին բոլանդակութիւնը, ունի իւր լեզուն, միաքը նարութիւնը, նշանակված ուղղութիւնը եւ նպատակը, մի խօսքով — ունի վեանքը Օրագրիս նոր խմբագրոց քաջ տեղեակ լինելով արագրականութեան այսպիսի նորհուրդնեն, շնուռմ է իւր նպատակը ազգայրն կրթութիւնը եւ լուսաւորութիւնը, այսինքն տարածել Հայերի մէջ այն մոցերու ո. բանք, լինելով Նւրոպական լսաւորութեան եւ քաղաքակրթութեան պատրազներ, կազմում են Նւրոպական կիւնը պարծանըը ։»

Այսպիսի լուսաւոր ծրագիրը շատ բան պիտի տար եւ մասամբ տուեց. Աղաբեգեանի բ կունկը ո զիրցով ու ծարպելով փոքրացաւ, վերնագրի տակ զրուեց և Օրագիր գրականական եւ մանկավարժական ։ որից յետոյ տպւում էր հետեւեալը. « Quod possum facio, faciant meliora potentes »։ (ինչ կարող եմ գրատում եմ թաղ կատարե տառել լաւ ով կարող է): Բաժնեգինը նշանակուած էր 5 ր., տարուայ ընթացքում տուեց 12 համար. միջակ թղթի վրայ Մելիքեան եւ Ընկ. տպարանից, որ յետոյ փոխուեցաւ նև սկսուեց տպուել և Հ. Էնֆիանեանց եւ Ընկ. և տպարանում.

Աս յետոյ կը խօսեմ Ստեփանէի կմբագրած ամսագրի մասին եւ առ այսման միայն ժամանակական կիրազով տպաց կը զնամ.

1866 թ. որ երկրորդ տարին էր համարւում վերացաւ և կուռնկը խօսքը եւ մնաց « Հայկական Աշխարհ ու որի առաջին համար(ները) լոյս

տեսան յունիսի սկզբներին (Մեղու 1866թ. № 22), այնպէս որ այդ տարին անցաւ անկանոն եւ այդ էր պատճառ որ տարուայ վերջը և Մեղուի մէջ մի լուր էր տպուած. « Առաջիկայ 1867թու ականին Հայկական աշխարհ անուն օրացիրը Թիֆլիսում էր շարունակվի նոյն ուղղութեամբ եւ ընթացքով ինչպէս մինչեւ ցայծմ. միայն թէ կանոնաւոր եղանակով արդեօք թէ ոչ այդ մասին երաշխաւոր լինել չենք կարող կարծեմ ինքն խմբագրողն էլ կ'զժուարանայ հաւասար զարթեցնել այդ մասին ընթերցողների մէջ ։»

1867թ. Ստեփանէն ինչ որ տարօրինակութիւններ սկսեց. Հայոց լեզուի կանոնաւորութեան հարցով սկսեց զբաղուել եւ № 4-ի վրայ տպեց և Հունվար ։ և Օրագիր դրակ. եվ մանկ. ։

Ահա այդ համարի բովանդակութիւնը.

ա) Մուսահամեդի գիշերային ճանապարհորդութիւնը Մէկկէից սկըսած մինչեւ նրուսաղէմ եվ այդ տեղից եօթերրորդ երկինքը։

բ) Թէ զրագիւռութիւնը ինչպէս առաջ գնաց։

գ) Մի կտոր հացի պատմութիւնից։

դ) Նամակ դէպի խմբագրող Պետերուրզից։

ե) Աղջիկների տուաջին համալսարանը Ամերիկայում։

զ) Լուսավորութիւնը եվ զիտութիւնը այժմեան Պարսկաստանու մէ։

է) Նամակ դէպի խմբագրող Մոսկվաից։

ը) Նոյնպէս — Պէտէրբուրզից։

ի) Հուսահատի երգ (բանաստ.)։

ժ) Խղճում եմ քեզ (բանաստ.)։

ժա) Մեր ներքին գործէր *։

ժբ) Մանրալուրէր։

ժգ) Մանուցմունք։

ժդ) Պատախաննէր խմբագրութեան կողմից։

Այստեղից ընթերցողը տեսաւ թէ ինչ հրէշային սխալանքների մէջ էր ընկել խմբագիրը. որ տեղի անտեղի գործածութիւնները նրան մոլութեան էին հասցրել եւ նա զրում էր և ննէր. լուսավորութիւնն Հունվար, բալշական, լավ, եվ, Հուսահատ, կտ (կայ), յետո և եւ այլն Տրաունջներ էին տեղում ամեն կողմից. մինչեւ անդամ Օրացոյցների խմբագիր Յովհաննէս Ֆէր Աբրահամեանցը Թէողոսիայից բողոքեց եւ մինչեւ անգամ սպառնաց. Բանն այնաեղ հասաւ որ լեզուի խորթութիւններին վերջ առաջ համար միջամտեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ստեփանէն փոխեց իր ուղղագրութիւնը. Պէտք է այս էլ նկատել. որ

Տրաունջներ էին տեղում ամեն կողմից. մինչեւ անդամ Օրացոյցների խմբագիր Յովհաննէս Ֆէր Աբրահամեանցը Թէողոսիայից բողոքեց եւ մինչեւ անգամ սպառնաց. Բանն այնաեղ հասաւ որ լեզուի խորթութիւններին վերջ առաջ համար միջամտեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ստեփանէն փոխեց իր ուղղագրութիւնը. Պէտք է այս էլ նկատել. որ

* Մեր ներքին գործէր — յօգուածները նախ իմբաղրում էր և թիֆլիցի Հայ ու իսկ յետոյ և Հայասէր ։ ու որ ինքն է խորէն վ. Ստեփանէն։

իմբագիրը ամբողջ համարն այդ ձեռով չէ թողնում, այլ յօդուածաղիրների կամքին էր թողնում եւ այդ պատճառով ամսադիրը լեզուի կողմից մի անտանելի երևոյթ էր

Փետրուարին լոյս տեսաւ 1867 թ. 2-րդ համարը, իսկ այնուհետեւ Ապրիլ-Մայիս միացեալ, Յաւնիս-Ծուրիսը նոյնպէս բայց օգոստոսուր չկար եւ սեպտեմբերին № 9-ը, հոկ. 10, նոյեմբ. 11, իսկ դեկտեմբերը չը լոյս տեսաւ Այսպիսով այդ շրջանում նա տունց 460 փոքրադիր է ջեր 1867 թ. փետրուարի համարի հետ ամսագրի բոյոր բաժանորդները ստացան Դէորդ կաթողիկոսի լուսանկարչական պատկերը

«Հայկական Աշխարհը» վկչի բնուեցաւ ժամանակակից Մերժակացաւանի, Գարուն եւ Վանատական թերթերի հետ, եւ շարունակ ծաղրում էր «Մեր ներքին գործեր» վերնազմի տակ եղած յօդուածներում Դիմացրն այն էր որ Ստեփանէն իրեն զուր էր թերում հայերենագէտ եւ այդ բանը հանգիստ չէր տայիս հակառակորդներին «Գարուն որ խմբագիրը Ստեփանոս ա. քան. Մանուշինեանը նախ զրեց որ Ստեփանէն իր գատաղութիւններով «ցոյց է տայի իւր ներքին կրքերի խոսվութւունը, եւ սկսում է գովինել իրա զլու խը իրեն մէկ ուսումնական, որին ոչինչ պատասխան չենք տալիս... բայց ինչ որ կվերաբերի նրա հայկաբանութիւնը զանը չենք առնիք քննելու»: Բայց ծիծաղելի էր Մանուշինեանի վերջին խօսքը, որով նա յայտնում էր որ հրիտանաւորդ խմբագիրներին այլ եւս պատասխան չէ տալու նս իրաւացի եմ համարում նրա յայտաբարութիւնը, որովհետեւ այնքան անպատճառ ածականներով պատուեց Ստեփանէն ծերունիք քահանային, որ մինչ իսկ զրաքննիչը սեւացրեց տպուած օրինակների մէջ այդ բոլորը

Աւելի հետաքրքիր է «Վաճառական» ո-ի խմբագրի պատասխանը, «Ենապում ենք հրաւիրել մեր կարգացողներին Մելիքովի եւ Բնիկ. աշպարանից դուրս եկած զրուց 1865 թւի № 10, 11 եւ 42 կոնկի եւ ներսից «Հայկական Աշխարհի» (մետամորֆոզա, — որովհետեւ գարնան պատճառով ամեն ստորին կենդանիները փոխում են իրանց տրամաքինեալը,) 484-85-86-87 եւ 89 երեսների վրայ տպած մեր զաղէթի վրայ նկատողութիւնները կարդալու Հարկաւոր ենք համարում ասել էղ ժուրնալի անձանօթներին, որ «Հայկական Աշխարհ» օրագրի օրագրողի միացրող-հրատարակողն է Մովկվակի Կայսեր. Համալսարանի պատմաբանական դիտաւթիւնների կանչիդատ Ստեփանոս Ստեփանէ (այսինքն Ստեփանեան ւ էլի մետամորֆոզա, միայն որանից երկու տարի առաջ պատահած): »

Մեզուն հօ՛ բոլորովին եւ շատ անդամ ամենաճարտար փաստերով ոչնչացնում էր կրքու խմբագրին, Ստեփանէի դէմ զրում էր յայտնի Փէլլետոնիստ Թոփալը (Զաքարիա Գրիգորեանց), որը մի ժամանակ նրա աջ թեւն էր եւ առաջին աշխատակից, սակայն «Մարիամեան»

դղրոցի¹⁾ առթիւ եղած տարաձայնութիւնների պատճառով, որտեղ Ստեփանչն մի կեղտի մէջ էր թաթախուած։ Հեռացու եւ զինուեց նրա դէմ։ Պատմութիւնը կ ացն մի օր աւելի բաց լեզուով խօսէ։ Թոփալը թշնաւ մութիւնից չէր անում աչք գոլորր, աչք մնեախօս եւ ինքնահաւաւն խըմբագրի լեզուն ճկելու համար և Հայկական Աշխարհ օրագրի կանոններով առամ էր Թոփալը և պէտք է որ ամսէնը մի դիր դուրս դարս բայց չէ. քան առրջաց մէջ չի պատահէր, որ մի քանի ամիս էղ օրագիրը շարունակարար դուրս էր եկել իր ժամանակներին Առաջ, ասենք, ստորադրութների թիւը թիջ երա ևս տարի խոհ ինչպէս ինքը առում է. շատացել էն ուրիշն էնքուն քրուն քր ժամանակներին, ամսէ ամիս, չէ ապկում եւ չէ հրատարակվում Եթէ Հայկական Աշխարհը ուր կարդաս կիմանաս որ իր ժամանակներում չը դուրս գալու պատճառն էն է. որ յօդուածներ շատ ունէ եւ եղ և խանգարում նրան ամսէն ամիս մի-մի տեսարակով արգ պելը հարեւի ի ևս լինի նրան պատճառը եւ որ խօսում են ու ես էլ յանցի, թէ յորս անսուանը միասին մռագիր է տպեւու երկու ամսուանը անցեազ ամիսներից տես երկու ամսուանն եկող երկու ամիսներինը . . . Առ վաստ դան չէր լինիւառ ևս էլ վարդատրութիւն կը լինի լընթերցողներին անցեալի համար ու Ասենացն ինչ աեզն էր եւ Թոփալն իբաւունք ուներ Անս այդ կերպ ենակեւաք պարզ ցուցակից։

1868 թ. Թիֆլիսում։ Օսմանուար Փետրուար-Մարտ, Ապրիլ, Յուն նիւ-Յունիս, Օգոստ, Սեպտ., Հոկտ. 1), Նոյեմբեր, Դեկտեմբեր = 9 տեսրութեամաս։

1869 թ. Թիֆլիսում։ Օսմանուար-Փետրուար, Մարտ, Ապրիլ-Մայիս, Յունիս-Յունիս-Օգոստան, Անդրամբեր-Հոկտեմբեր 2) = 7 տեսրութեամաս։

1870 թ. Թիֆլիսում։ Յունիսաշրջ. Փետրուար, Մարտ-Ապրիլ, Մայիս-Յունիս, Օցոնիս-Օգոստան, Անդրամբեր-Հոկտեմբեր-Նոյեմբերը Դեկտեմբեր = 7 տեսրութեամաս։

1871 թ. Թիֆլիսում։ Յունիսաշրջ. Փետրուար, Մարտ, Ապրիլ-մայիս 4) = 4 տեսրութեամաս։

¹⁾ Եստեղ սիսակամի և Մարիամեան ս պղբոցի հիմնադիր էն համարակ Ասեփու նէրն Արդարութիւնը պահանջում է տակ, որ գորոցի նախանձուն հիմնադիր է Արդարութիւնը պահանջուն Տէր Ալիմն Զմշկեանը, որից վերցընց զեկու Ստեփանէն և Հ. Գրիգորեանցի հետ կարգի բներց դպրոցը մասնաշահուն հոգմը ըսդկացած էր ժամանակի նորաւարաւ համարածարանափառներից և երբ Ստեփանէն ըլուցանեց առուցիչների արդար պահանջը՝ սրանքի հենացան։

1) Հոկտեմբերից ապամում էր առաջին երեսի վեռոյ դափանդախութիւնը
2) Տ. Յ. 1869-ին առաջ վերջինը նոյեմբերին, իսկ յաջորդ տարուայ մայնուարին և Թիվթից մեծ համարի առաջ գեկտեմբերից համարն եր քաջնուամ ցունուարի համարը դրէնց ըսլուր բաժներութեամաս։

3) Ա. Ի. Համարով դպրոցը ամսադիրը խմբագրը հրաւիրուցաւ էջմիածին, ուր 1872 թ. փետրուար 26-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ և անուանուեցաւ իւս բէն վ. Ստեփանէ։

1874 թ. Շուշում 1): Ապրիլ-Մայիս (№ 1-2), Օռնիս, Շուշի-Գոգոստոս 2), Սեպտեմբեր-Հոկտեմբեր, Նոյ., -Դեկտ. = 6 անտր:

1875 թ. Գանձակում Յունուար-Փետրուար-Մարտ, Ապրիլ-Մայիս, Օռնիս-Շուշի, Օգոստոս-Սեպտեմբեր, Հոկտեմբեր-Նոյեմբեր, Դեկտեմբեր = 6 անտր:

1876 թ. Գանձակում և Թիֆլիսում Յունուար-Փետրուար, Մարտ-Ապրիլ, Մայիս-Օռնիս, Օգոստոս-Սեպտեմբեր, Հոկտեմբեր-Նոյեմբեր 3), Նոյեմբեր 4) = 6 անտր:

1877 թ. Բազու 5): Շուշուար, Փետրուար-Մարտ, Ապրիլ, Մայիս-Օռնիս, Շուշի-Օգոստոս-Սեպտեմբեր, Հոկտեմբեր-Նոյեմբեր-Դեկտեմբեր = 8 անտր:

1878 թ. Բազու Յունուար-Փետրուար, Մարտ-Ապրիլ, Մայիս-Օռնիս 6):

1879 թ. Երևան 7): Այս տարին էլ՝ ըստ իմ մի ազգիւրի՝ տպուել է 12 համար, սակայն այդ չի ճշտուում

1874 թ. ամսադիրն իր զոյնց փոխեց, խօսեմ խմբագրի լեզուով. «Կառավարութիւնից թոյլատրված նոր պրօցրումով այս 1874 թվի ապրիլ ամսից, պիտի հրատարակվի նորէն մանկավարժական և կրօնական սրագիր և Հայկական աշխարհն ու որ դադարեց 1871 թ. խմբադրողի Թիֆլիս խողնելու և էջմիածին դնալու պատճառով» Հայկ. աշ.-ի նպա-

1) 1874-ին պաշտօնով Շուշի տեղափոխուել ով, ամսադրի հակատին գրեց սյանկա վարժական և կրօնական օրագիրը: Շուշում տպաւմ էր Հույս Հոգեսր Խորոցի աղբարտութեամբ:

2) Ցուլիս-Ծննդուած համարի վրայ տպարանը ուսւ լեզուով ե գրուած ո Շուշա և Ելիսաւետպոլ, Շուշու Հոգեսր Սեմինարիայի և Ֆեօդորովի ու Թառումովի Ելիսաւետպոլ քաղաքում Հետեւել համարներն տպուած են Ելիսաւետպոլու (Քանձակում) և տպարանի անունը ստերեն է տպուած:

3) Սեպտ.-Հոկտ. միացեալ համարը լոյս տեսաւ թիֆլիսում Յազ. Մարտիրոսեանի տպարտներմ: Հետեւեալ համարն էլ նոյնագետ:

4) Ցարուայ վերջին համարն էր:

5) և Հայկան Մարգարետիան Էնի. ապարանում ու Այս համարով գոհացնուու էր գործեալ անցած տարուայ բաժանորդներին գեկտեմբերի փետարկեն:

6) 1878 թ. համար յայտարեց որ տարուայ մեջ տալու և վեց համար, ուրեմն երիտասարդ հանդէսի փոխեցի իմ ունեցած ազգիւրներով պայտ տարին երեք համար և լոյս տեսել, սակայն ս կազիկազի կայենքարով ո 12 համար (°):

7) Անուցիս կայ միայն մի համար, որի վրայ գրած է և երեսն Զաքարիայ Գեորգեանցի տպարտն ու Բովանդակութիւնը շատ թօյլ 4, ա) ըստ նախկին տեղակի շարտութեալ Հոգեսր ազգային դպրոցաց Վասակայ Պապաշանեան: բ) Ջոր լեզու, վեհապահութիւն (Թարգմ. իտալերենից) գ) Սեր և լուս, վիզասանութիւն: դ) Մեր ձայն: վ. գ: Գեւաց և նկատեմ որ և Մեր Ձայն ու ը փոխարինում էր Համբէին «Մեր ներքին գործեր» յօդուածներին և շատ հարուստ էր տեղեկալթիւններով:

տակ կլինի — կրօնական ընթերցասիրութիւն տարածել հայազն հասարակութեան մէջ, աղդային գպրցների առաջդիմութեանը եւ ժամուկաների կրթութեանը նովաստել իւրովսանն 1), նոր հայկական լեզուի մըշակութեանը 2) առանձին ուշք գարձներով։ Հայկ, աշք գրելու է մայուր կանոնաւոր հայկական լեզուվ։ . . . Կրովանդակէ։

4. Մանկավարժական ընտիր լոցուածներ, մանկավարժութեան ներկայ դրաւթեան եւ զարգացման տեղեկութիւններով զանազան լուսաւորված աշխարհների մէջ։

5. Օրիորդներին եւ պատանեակներին օդաւելու ընթերցանութեան համար գրվածներ պատմական, ընապիտական, կենսագրական, ճանապարհորդական, առողջապահական եւ այլն։

6. Կրօնական գրուածներ վարովներ (թարգմանւած կամ յարմարեցրած)։ Ա. Գրքից թարգմանութիւններ աշխարհաբար լեզուով։

4. Աշխարհաբար լեզուի կանոնների եւ ոճերի ըննութիւններ։

5. Մանկավարժական եւ գպրցական գրվածների քննութիւնն Հոգեւարականների եւ հոգեւոր գպրցների մասին տեղեկութիւններու Մատենագրական տեղեկութիւններ։ Զանազան մանր լուրեր ։ ։

Ամսագիրը հաւատարիմ մնաց իր ծրագրին Նա հարուստ րովանգակութիւն ունէր, մանաւանդ վերջին և Մեր Զայն և վերնագրով տեսութիւնները, որոնց մէջ Հայասէրը, Համբարձում Առաքելեանը եւ այլք քաղուածներ էին անում Ռուսաց, Տաճկաւայոց թերթերից, կարեւոր տեղեկութիւններ հազորդում Հայասէրը առանձնապէս հաշիւ էր տեսնուց Ռուս թերթերի հետ, երբ նրանք հայութեան դէմ որ եւ է սխալ լուր էին հաղորդում։

Հայասէրի սրամուութիւնները երրեմն ծայրայեղ ծազրի էին հասնում եւ Ստեփանէն ոչ ոքին չէր հաւատում 1869 թուին Մեղուն. մի զատ տուեց նրան. Լուցիան ստորագրութեամբ մէկը (45րդ համարում) բաւական յաջող կերպով քննում է Ստեփանէին իբրեւ հաստրակական գործիչ, խմբագիր, ճշմարտախօս եւ բարեխիղճ դործիչ. Հայոց լեզուի մշակ, բազմակողմանի գիտնական գտառիարակ, իբրեւ հաստատ իր պրինցիպին եւ այլն եւ կարելի է համբաւի ասել, որ Ստեփանէին գուրս է բերում իբրեւ ոչ այն ինչ որ ինքն էր կարծում. Մի բան աններքելի է որ Հայկական աշխարհը մեծ օգուտ տուեց նայ գրականութեան Արքական գրողների գրուածքների հետ ծանօթացնելով։

1) Այդ տարուանից հանդէսի մէջ կար առանձին և Մանկական բաժին ու որը յաջող էր խմբագրուում։

2) Այս մէկը սխալ է։ Խէպէտ ամէն մի համարի կողի վրայ ապօտ էր ԱՄիշտ առանձին ուշք գարձնել նոր հայկական լեզուի մշակութեանը նովատակը, բայց նա աւելի եւս տղաւաղեց ժամանակակից լեզուն։

Առաջ բաժնեղինը Յ թուրի էր եւ Թովում էր Յ թերթից մի համար, բայց 70ական թուականներից համարը բազկացած էր մերթ երկու թերթից եւ մերթ պակաս եւ արժեր Յ թ. Տպում էր սակաւաթիւ, սրինակ 1875-ին տպուել է 300 օրինակ, 1877-ին նոյնպէս, յաջորդ տար թիւն 200 օր., իսկ վերջին տարուայ չնթացքում 300 օրինակ:

1869 թ. կնեց սեփական ետաներ և Սեպտեմբերի ու Հոկտեմբերին այդ տառերով (մանրատառ շեղագիր) տպեց Դեմուրեան եւ Ընկ. տպարանում, իսկ յաջորդ համարը (միացեալ) լոյս տեսաւ Հայկական Ա՛խարհի տպարանում ոռվորական տառերով, որովհետեւ շատերն էին գանգատուել տառերի վատ իինելու համար: Սեփական տպարանը ծախսեց Նա 1871 թ. երբ Հայկ. Աշխարհը ժամանակաւորապէս դադարեց:

Այդ ամսագրին աշխատակցնել հն՝ Գր. Արծրունի, Խիստն Բազրատունի, Զ Դրիգորեան, Փ. Վարդանեան, Վ. Աղբազարեան, Յարութիւն Ոստանիկ (Յով. Քուշուբէգեան), Օ. Միքիմանեան, Սալօմէ Մակիանեան, Աէյեատ, Յ. Դեղամեան, Պ. Պաշեան, Հ. Թիւսիկեան, Կ. Չալարեան, Գ. Ցովհաննիս, Դ. Մալթեան, Ե. Տէր Միքրեան, Հ. Ասաքելեան, և Լալայեան եւ այլք *):

2.

ՎԱՃԱՌԱԿԱՆ (1866—1867)

Հայ լրագրութեան պատմիչները (բոլորն էլ) շատ անփոյթ են վերաբերուել դէպի այս շարաթաթերթը եւ կամ ազբիւրներ չունենաւով՝ ոչնչով՝ լորել իրանց գրուածքները որպէս զի բան տասէ յինեն: Այստեղից թո՞ղ ներնն ինձ, եթէ ասեմ՝ որ ամսն մի բուռ ու սիսու ազբիւրից օգտուելու տեղ, լաւ: Ե լուել, եթէ մէկը Հայոց մատենագրութեան պատմութիւն է գրում, նա պէտք է նախ գանէ մատենագիրների զրաւոք վաստակները եւ նրանցից վերջնէ նրա պատմութիւնը: Ո՞ւ եւ Ե լրագրի պատմութեան իսկական ազբիւրը ինքն է՝ բրագիրը: այլապէս պատմութիւնը ստած կը լինի Պ. Յարուն շարաջար սխալում է իր հեղնական տողերն ասելու համար և Վաճառականն ու անում էր այն, ինչ որ կանէր վաթսունական թուականների խմբագիրը:

*) 1879 թ. Մշակ Ն^o 51ում կինչպէս Պ. Լեւոնեանն է ասում) արպուած է. «Մեզ հաղորդում են Երեւանից որ Խորէն վրդ. Ստեփանէն և Հայկական Աշխարհի ո Երատարակութիւնը յանձնել է պ. Վ. Բարտիշանեանին. պարոնը յիշեալ ամսագիրը Երատարակելու է Երեւանում չ: Այդ չիբականացաւ: »

1866 թ. մարտ 6-ին^{*}) կիրակի օրը լոյս տեսաւ առաջին համարը։ Դա այժմեան և Հանդէս ամսօրեայից ու քիչ կարճ ու յայն քառակից, եռասիւննակ մի թերթ էր, որի վրայ գրած էր, և Վաճառական թիֆլիսի առևտրական գաղեթ, շարաթական թերթ, առաջին տարի ու և Վաճառականը և հրատարակում էր կիրակի օրերով, 10 ամսուան բաժնեգինը թիֆլիսի համար 2 ր. 50 գ., գուրսը 3 ր. Էր նշտապօւած։

Nº 4-ի բովանդակութիւնը.

Տէրութենի կարգադրութիւնները. Տորգելը. Եւրոպայի առուտուրի վիճակը. Եկեղեցու բուրջը եւ Լալօի նահային. Առևտրական աեղեւթիւններ, Մազանդեք

և Վաճառականի և խմբագիրը կորած արդկանցից չե. զա յայտնի ազգագրագէտ Դէր Աղէքսանդրեանցն էր (80ական թուականներին մեռաւ), որ աւնի հասարակական եւ գրական անցեալ եւ աւելի իրաւունք ունի հայ գրականութեան պատմութեան մէջ, քան նրա սրախօս քննադաները, և Վաճառականի և միակ պակասութիւնը աշխատակիցներ չունենալն էր եւ խմբագիրն ու Աղէքսանդր Երիցեանն էին թերթը խմբագրում. Թերթի մէջ լոյս էին տեսնում մանրամասն լուրեր անուրդների մասին, այլ եւ այլ Եւրոպական եւ Կովկասկան քաղաքների սակագները, առեւտրական լուրերու ասածնորդողներ Եւրոպական ֆինանսական կեանքից, վիպակներ, ազգային լուրեր, պետական պարզեւառութեանց ցուցակը եւ այլն Թերթը շարունակուեցաւ կանոնաւոր կերպով եւ տարուայ վերջը՝ գեկաեմրերի 25-ին գոյս տեսաւ տարուայ վերջին՝ 42-րդ համարը։

39-րդ համարում խմբագրութիւնը տպեց կանոնների թղթակիցների համար Վաճառտրութիւն զկար, սրովհետեւ նիւթականը սուզ էր, և բարձ որոշ պայմաններում թերթն էր ձրի ուղարկուում. և Մեր թղթակից լինելու համար հարկաւոր է որ ցանկացողը աղարկէ մեզ իր նամակը. . . եւ եթէ ևն նամակը ամբողջ կամ մէկ մասով տպվի մեր գաղեթումը. նրանից յետոյ էդ մարդը կկոչվի մեր թղթակից, նամակ գրելու օրից մէկ աարի ժամանակով. . . Հասարակական գործերի թղթակիցը իր առաջին նամակի մեր գաղեթում տպվելուց յետոյ պարտաւոր է մեզ հասցնել տարին գոնեա 3 նամակ. իսկ առեւտրական գործերի թղթակիցը գոնեա 12 նամակը, եւ այդ դէպքում ի երթը ձրի էր ուղարկուում։

Յաջորդ տարուայ համար 30-րդ համարից (Հոկտ. 2) բացուեցաւ բաժանորդագրութիւնը, որով խմբագիրը խոստացաւ որ յօդուածներում

* Դեռ եւս 1866 թ. յունուարից «Մեզուի» մէջ լոյս տեսաւ մի յայտարարութիւն և Վաճառականից վերաբերեալ եւ բաժանորդագրութիւնը բացուեցաւ մինչեւ 1867 թ. յունուարի 1ը Այդ շարաթաթերթը տպւում էր և Հ. Էնֆիտանցն եւ Բնկ. ս տպարանում։

պատռեած տոււարական այլ եւ այլ անհակաների խօսքերի համար բաժանորդներին տալու է և Առեւտրական բանարան ու որ կազմելու է Առերթեանը, թերթը մնանալու է, չոյս է տեսնելու հինգշաբթի օրերը եւ արժինալու է 5 ր. Ամբու առելացնում է, և Անք զազէթը և պէտքի պահպանէ իր հրմիկվան ուղղութիւնը, այսաւելով որքան որ իր մինչոցները կը ներեն ծանօթացներ բնթերցողներին մանաւանդառեւորտ կան եւ տնտեսական զիտութիւններին վերաբերեալ զիխառոր առարկաներին*), և 1860 թ. և Վաճառականից ու արտասպուեցաւ և Թիֆլիսի քաղաքական կառավարութենի նոր կանոնադրասթիւնը » բրօքի բրա
Վերջին համարումն էլ տպուեցաւ բաժանուղագրութիւնն բանելու մասին եւ իմբարտքութիւնը խորցրած էր Շուշու, Ամենլիսի եւ Ախալցիշ լաքի բաժանորդներից վճարել ապառիկները

Ես շունեմ 1867 թ. « Վաճառականը » բայց առանց կասկածերու համարձակ կարող եմ ասել, որ թերթը շարտանակուեցաւ մինչեւ յունիս սը վերջինը հրատարակւում էր անկանոն եւ նիւթական պահպատ իմբանից ստիպուած եղաւ զադարելու Ահարինը է զրում այդ առթիւ Հայուս սեր և Հայկական Աշխարհում » (1867 յունիս 20-ին էջ 232) և Նոր լուր երեք շաբաթ է Վաճառականը չեխ տեսնել Հարցրի ինչ ասպացին և ավանդում է հազին եւ թէ Մեղոս Հայ անսեր է կարում. Մեղոս Հայ, մի՛ շտապէքը ներ բարեկամն էր խղճացէց օդնեցիք... և նաց անելի ծիծաղելի է Հայասէրի՝ զադարման մասին հրատարակած շտարը և Հոգեվարք Վաճառականը Աստուծու օդորմութեամբ հոգին աւանդեց վերջապէս խեղճը. խորիմասաւ, բայց ազնիւ զործ չպիտի իինի ստորած գրողների 7 ամսի փողեր զբանելը, և 6' եւ ամօմիսած Հայերից ով պիտի իւր փողը ես պահանջէ » (Հայկ. աշ. № 6-7. 1867 թ. էջ 342):

Այսուղից պարզ երեսում է, որ վերջին համարները լուր պեսած մայիս ամսին Ռւբենի թերթը հրատարակուեցաւ 13 ամիս միացն եւ ոչ թէ տարի ու կես ինչպէս ընդունում են պատմիչները

Ե.

Դ Ա Բ Ո Ւ Ն. (1866 թ.)

Ինչքան էլ ծաղրել են Հայ Մամուլի գործիչ Ստեփանոս աւագք. Մանղինեանցին, այնուամենայնիւ և մնե տէրտէրը » արել է այն, ինչ որ չեն անում ներկայումս քահանաները, և 6' եւ ամօմիսած Հայերից ով պիտի իւր փողը ես պահանջէ » (Հայկ. աշ. № 6-7. 1866 թ. էջ 342):

*) 1866 թ. Դեւոնդ երէց Խարազեանցի (Վանքի միաբան, գետ եւս կենդանի է). Կազեւորականութեան վերաբերեալ յօդուածներ տպուեցան Վաճառականում, որը շատ անտեղ էր եւ թերթի ծրագրին հակառակ:

զարդացած եւ խելօք մարդկանցից մէկն էր Զը Նայած այն հանգաման-
քին որ նա մնե զրկանքներ էր կրել « Մեղու Հայաստանին չ շաբաթա-
թերթը հրատարակելիս, այնուամենային նորից փորձեց լրագրական
առզարեզ դուրս գալ եւ մարտ*) ամսի վերջերին լոյս տեսաւ նրա հրա-
տարակչութեանը (ամսագրի վրայ գրում էր « Հրատարակիչ Ստեփանոս
աւագ քահանայ Մանդինեանց ») « Գարուն ո ամսագրի առաջին՝ յուն-
ուարի համարը, որի վրայ գրուած էր « Գարուն ամսագրի ազգային լու-
սաւորութեան եւ գաստիարակութեան 1866. տուաշին տարի, ամսատետր
և » իսկ ներսի թերթի վրայ գրուած էր եւ Յունուար: Թէ շապիկի եւ
թէ ներսի երեսի վրայ գրուած է մի տուն յայտնի երգիչ Պետրոս վար-
դապետ Դափանցու բանաստեղծութիւներից:

Պայծառ արփին արդ բարձրացաւ
Հալման սառին ժամ է արդէն.
Կարմիր վարդին ոստ կակղացաւ.
Մաղկման ծառին ժամ է արդէն:

Աւա 1866 թ. № 1-ի բովանդակութիւնը.

ա) Գարուն ամսագրի — Ս. ա. ք. Մանդինեանց:

բ) Եկեղեցական պատմութեան ազգեցութիւնը. — (Մանդինեանց:

գ) Տէրունական Ազօթքի Մեկնութիւն — Ա. Տէր Յակոբեանց:

դ) Օրիորդների Դաստիարակութիւն. — Ս. Թաղիաղեանց* *):

ե) Սուրբագրութիւն Թիֆիլուն. — Ա. Տէր Յակոբեանց:

զ) (Մի պատասխան « Հայկական Աշխարհի » խմբագրի պ. Սահ-
մանէին):

« Գարունը չ ապում էր ՚ի Տպարանի Գլխաւոր Կառավարութեան
Փոխարքային կովկասու, միջակ թզթի վրայ, « Բանասէրի » դիրքով նկ
երեսից բազկացած:

Առաջին յօդուածի մէջ, որ բաւական յաջող է գրուած, խմբագրին
առում է. « Մեր ամսագրի անունը կոչեցինք Գարուն, որ եկեղեցական,
կրօնական, ուսումնական եւ բարոյական գիտութիւնների րուրաստան-
ներից բազկելով ծաղիկներ, փունջ կապինք ամսագրիս միջնորդ, եւ ա-
մեն ամիս ընծայենք մեր սիրելի եղբարց, ինչպէս կարնան վարդի փունջ
եւ նետ զնետէ ծաղիկի մեր բուրաստանն. զոր բաժանում ենք չորս մարդ
(կվալ): Առաջին բաժանումն կրովանդակէ իւր մէջ նոզեւորական առար-

*) Վերջին երեսի վրայ ոսերէն լեզուով յրուած է զրաքննիչի Բոյ-
լատութեան ամսաթիւը 21ն մարտի 1866 թ. յունուար 5-ին է թոյլաբ-
ութիւն ստացել:

**) Պէտք է աշքի առաջ ունենալ, որ Ս. Թաղիաղեանն անձամբ չէ
աշխատակցել, որովհետեւ 1858 թ. մեռաւ, այլ ոտ լոյս տեսած զրուած-
քից էր արտատպուած:

կայք՝ պատմութիւն քրիստոնեութեան եւ եկեղեցւոյ, ճառեր, քարոզ-
ներ, նկարութիւններ, երեւելի սուրբ վարդապէտների վարդապրութիւնը, թէ կին եւ թէ նոր հեղինակութիւնը կամ թարգմանութիւնը, թէ գրա-
բռա եղ ող այշ արմատական եւ մայր լեզուն պահպանուի, որ աշ-
խարհաբարուի ծնողն է մա կիւրկորդ՝ որ մեր երանելի նախա-
նիաց հպտուկտոր գրութքնելը ապացրելով պահպանենք նոցա անմո-
ռանալի յիշապահը... Ավելիրդ քաժանումն կպարունակէ բուժաներ
(բանասրութան պատմութիւնը) վիպասանութիւնը, զրոյիներ, հումա-
ռու նկարագրութիւնը, տեղացրութիւնը, զրամէք (թատերական ձեւով,
շինած պատմութիւն) ոտանպւրներ, թէ՛ եղինակութիւնը եւ թէ
թարգմանութիւնը Երրորդ բաժանումն, է մատենազրութեան տևու-
թիւն Մրան կլերաբերի կրիտիբական քննութիւն առելի հայերէն երե-
ւելի դրեւրի եւ գրւածքների վերայէ որք եկ՝ զատկան զրեանք վիրա-
բերեալք կրօնին եւ եկեղեցական արարողութեանը եղ ծէսքին. Հայոց
լեզուի դպրութեան նոյնապէս ամսացիւներին եւ լըադիւներին. Դա եւ
պատմաբանականներին՝ Այս քաժանումն կունենաց եւ Պետազիդա-
կան (ռուս. մեկական) յօդքաւծները. Չորրորդ քաժանումն կոչվում է մամա-
նակակից տեղեկութիւնը. 1) Ծնական տարիզրութիւն — ներքին կի-
ցութիւն Հայոց սրանց կլերաբերի ազգաքին, սրբութիւնքը, 2) Ֆեւլ-
տուն առեւելի անձնութիւնագրութիւնները... Մեր ամսացրի նիւթ տը-
լողներին առաջարկում ենք նեստեալ պայմանները!

1) Նիւթն զոյ մինք կհաւանենք հպտաբակելու, տւողն կստա-
նայ ամեն մէկ տպագրեալ, կամննդարնի, թիրթի համար, հեղինակութեադ
նը տասն եւ հինգ մանէթ, իսկ թարգմանութեանը տասն մանէթ:

2) Եթէ նկրթն բացկանայ չորս եւ կամ առելի կամինդարնի թիր-
թիզ, եւ ուերն կամենայ, տուածին գրքոյի կազմել, ... մէլլ ծախորդ կը
տպել տանք հինգ հարբեր հատ, եւ այս միշտն կլինի նորա աշխապանքի
վարձն:

3) Եթէ գրուածքի մէջ գտանւի ում եւ իցէ անձնական պատմին
կծողական խօսքեր, այնպիսի քողուածն կմայ առանց հրատարակելու...

4) Ազգային վելաբերեալ բաների մէջ, կամ որ եւ իցէ միաբանադ
կան կարգին, նոյնպէս չը գործ ածել ոչինչ անարգական խօսքեր, եւ ոչ
խստութիւն, այս որշափ կարելին է պահանել մեղմութիւն, զրել պա-
կասութիւնցը եկ՝ նոցա. գէմ բաղկաւթեակն կանոնները».

* Այսանդ անում է եւ այն եի որիւէ գիրք քննելիք և ամենեւին
լիիպչել գրողին, այլ սխալները ամենայն բաղաբարաւութեամբ հանդէս
հանել եւ ուղղել ու առնասարակ լինել « անաշառ ու անկողմնակի յա

Յ) Նթէ գրուածքներն վերաբերին պապականներին եւ լութերականներին, կամ թէ նոցա գրքերն քննիին, որք յատկապէս են կրօնի եւ արարողութեանց կամ տօնակատարութեանց վերաբ պահպանել Յ եւ և յօդւածների պայմանները:

6) Մենք ոչ մէկի գրւածքը սրբազրելու չենք, և եթէ կրիտիկայ գրող լինի կրտատարակինք... ։

7) Մեր գրւած յօդւածնների վերաբ արած նկատողութիւնքը պարզ մտքով, կրտատարակենք եթէ ուզզութիւն գտնենք, մինչեւ անզամ հըսրապարակաւ շնորհակալութիւն կանենք եւ մէկ քանիսի պէս յարձակմունքներ չենք անել, քաջ գիտելով թէ ամենայն ինչ այխարհիս վերայ դեռ եւս չէ այնպէս կատարելապործած... ։

Ահա այսակից ամեն ինչ երեւում է. մում է միայն յիշել, որ տարեկան Յ բուրի արժէր:

Ինչպէս առաջինը, այնպէս Ել միս Էամարները երտարակութեամբ ուշացան եւ տարուայ Ընթացքում՝ լոյս տեսան միայն Դ համար եւ Սուլիսի համարով դադարեց, սակայն պէտք է այս Ել ասել, որ ԱՂեղուի մէջ (1866 Կոկտ. 29 № 42) լոյս տեսան մի յայտարարութիւն. «Պարուն անուն ամսագիրը առաջիկայ 1867 թուականին կ'հրտարակվի նոյն ընթացքով եւ ուզզութեամբ, ինչպէս ներկայ 1866 թուականին, եթէ միայն բատականաչափ ստորագրողները կ'ունենայն»

«Հայկական Աշխարհնը ինձ կասկ ուի տակ է զցում Թեպէտ իւ աղբիւրները ըոյց են տալիս միատեսակ որ Դ համար է տառել (Ճեռքիս ունիմ միայն № 4ը,) այնուամենայնիւ կարծես թէ 1867 թ. եր շարունակուել է. որովհետեւ Հայասէրը և Հայկական Աշխարհը որի 1867 թ. № 4-5ով (էջ 230-231) թազման առմիւս ներոզութիւն զպդարման առմիւսպել է հշխան Բագրատունու տանաւուրը. որ քազու ածորին մէջ եմ բերում.

Գառունի թաղումը ։

(Մեռավ կարճ, բայց ծանր հիվանդութիւնից յեառ) Կնքեց իւր կեանց նոր ամսագիր Կրօնական մտքէրի թարգման — Արդէն զայնդ տիեզերքին ։ Նորէն տիրեց մթին խազար. . .

* Ընթերցողներին զգուշացնելու համար յայտնում եմ, որ առանձառ որի մէջ պահպանել եմ Ստիփանէի հայկաբանական սրբագրութիւնը. որի զէմ կռւում էլ միշտ «Պարունաց»

Նշանավոր, նշանաւէր,
Տամբասանքի միշտ անմեղ գոհ,
Բնկավ հսկա խմբագրողը,
Ընկավ իւր խիստ բարձրութիւնից»

Աեղե հայացքով մտածման մէջ
«Վաճառական», զո՞ն ինքն մատոյց,
Փառք Անմահին, փառք Աստուծուն, —
«Երեւակը» *) հեռու ից գոչեց»

Օրագիրներ եկել եին
Վերջին պարտքը վճարելու.
Փառքով ընկած իւր ընկերին,
Որպէս Հայատարիմ եղբայր»

Ազրօվ, ցալօվ հեան էր գնում
Արտավագի «Վաճառական»,
Միշտ արտասուք էին թափում
Նորա առաս դատարկ տեղից».

Այնանդ էր եւ «Երեւակը»
Մեր ամէնքիս ան ու դողը.
«Մի լար, ընկեր, արիացիր,
Նոյն է եղել զէխիս, մի լար»»

Կողքին էր գնում սեւ զգեստով
Ամբողջ սՄեղու Հայաստանի».
«Լնչի էիր դու ինձ թողնում,
Սա ինչ եկավ զիխի՞դ... մի լար»»

Թաղման փառավոր հանդէսին
Ներկա էր եւ Համբավարեր **),
Այնտեղ էր եւ Արարատը ***),
Եւ Հիւսիսը ****) եւ Սիօնը *****).

*) Հրատարակւում էր Կ. Պոլում 1857-1867 թ. Յ. Տերոյենցի խմբագրութեամբ।

**) Համբաւարեր Ռուսիոյ լրագիր կիսամսեայ, հրատարակւում էր Մոսկովյում 1861-64 թ. խմբագրութեամբ Զարմայր Մոերիանի:

***) Արարատ, եջմիածնի պաշտօնական օրդանը:

****) Հիւսիս շաբաթերթը հրատարակւում էր Գետերուր գում 1863-64 թ. խմբագրութեամբ անմահ բանասեղծ Շաֆայլ Պատկանեանի:

*****) Սիօն ամսագիրը հրատարակւում էր Սրբուազէմում, խմբագրութեամբ Հայոց Ս. Յակոբիանց միաբանութեան 1866-78 թ. »

Սիրելի զագաղ աանելով
Դնում էր այրի խմբագրօղը.
Եւ կարդում էր արտասուքով
Հետազա սաստիկ բառէրը:

... Ատորագրվելու աշխատանքից
Ամէն Հային ազատեցին
Նախ օրագիրս եմ ուզարկել.
Յեառ փողերըս պահանջել...

Եւ այլն, եւ այլն զեռ երկար չարունակւում են անճռոնի ծազրանքները, եւ այս անում է այն ամսագիրը, որ երբէք կանոնաւոր չի հրատարակուել եւ երբէք բաժանորդներից ստացած փողերին լիացում չէ տուել:

«Փարունից մասին իմ տուած տեղեկութիւնները պակասաւոր են եւ ես գուցէ գտնեմ բոլոր համարները եւ մի օր լրացնեմ սրա պատմութիւնը»

Հ. Տէր Ա.Ա.ՏՈՒՄՆԱՏՐԵԱՆՑ

